ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 319 -Ա

ք.Արտաշատ

„18„ Օգոստոս 2026թ.

ԱՆԱՀԻՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ »ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 875 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2026 թվականի օգոստոսի 19-ից Անահիտ Ավետիսյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալարի միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

8/18/2026

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ